

16443

16444

891.99
12-16

25 Oct 6.

St. Helier -

4/2009

Quay 14.
120

124

t,

11
11

N = 5431

ԹԵՄԱԿԱՆ ՄՐՄՈՒՆՁՆԵՐ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ ԵՒ ՊԱՐԵՐԳԵՐ

Խ Ճ Բ Ա Շ Ա Բ Ե ց

ԳԳ. ԱՐԴՈՒ ԲՐՈՒՏԵԱՆ



203

Ա. Վ. Ե Վ Ո Ո Ն Ք Ր Ո Փ Ո Լ
Յ Փ Չ Ր Ո Ւ Ք Ե Ա Ր Դ Ա. Ս Ա Ն Ո Յ Ե Ո Ւ Յ Բ

Տիոգրաֆія К. С. Саноянца. Бебутовск. ул., собственн. домъ

1896

№ 5731.

89499

№ 16

աւ

ԹԱՄԿԵԱՆ

ՄՐՄՈՒՆՁՆԵՐ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ ԵՒ ՊԱՐԵՐԳԵՐ

1001
1331

Խմբագրեց

ԳՓ. ԱՐԺՈՒ ԲՐՈՒՏԵՐ



ԱԴՐԱՎՈՐ ՎՐԱ

ՏՊԿՐԱՆ ԳԵՐՐԴ Ա. ՍԱԴՈՎԵՆԻՑԻ

Տիոգրաֆія К. С. Саноянца. Бебутовск. ул., собственн. домъ

3654

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Թէ ի՞նչ է երգը, երգեցողութիւնը, եղանակը և այլն, այս մասին աւելորդ եմ համարում գրել, որովհետեւ շատ շատերը զգացել և գեղեցիկ կերպով բացատրել են. միայն մի քանի մասին շատ քչերն են ուշադրութիւն դարձել, և այն հետ զհետէ մոռացութեան տալով, կամ լաւ ևս տսած՝ արհամարհելով, քիչ է մնում որ կորստեան մատնուի: Մեր որոնածը հին, կամ այսպէս տսած, ուամկական եղանակներն են, որոնք գրէ թէ միմիայն զիւղերում, աշուղների և ուրիշ մասնաւոր անհատների բերաններում, թէև կիսով չափ էլ աղճատուած ու աղաւաղուած, գեռ ևս կիսակենդան երեւում են: Մի քանի տարի ևս՝ և ահա կտեսնէք, որ այլևս իսպառ հին եղանակ չունենք. որովհետեւ բնականապէս հինը նորին տեղի պիտի տալ. բայց նորը յառաջ դալով՝ չի նշանակում, որ հնից պէտքէ ձեռք վերցնել և կորցնել:

Այս հանգամանքն ի նկատի առնելով, գլխաւորապէս Պ. Աղքք. Միիթարեանցի առանձին յորդորմամբ, որին պարտական եմ գործիս յաջողութիւնը, և որի յորդորներն ու աջակցութիւնը, գեռ ևս տասը տարուց սկսած՝ հարկադրեցին ինձ ձեռնամուխ լինել սոյն դժուարատար աշխատութեանը, որ երբեմն զիւղերը շրջելով, երբեմն աշուղներին և ուրիշ զիտակ անձանց երգել տալով՝ մի քանի հարիւր խաղի, տաղի հին եղանակներ (երգերի հետ միասին), պարերգեր և սոսկ (առանց բառերի) պարի եղանակներ ձայնագրեցի անկորուստ մնալու, և թերևս արևելեան երաժշտութեան ուսումնասիրութեան նիւթ լինելու համար:

Дозволено цензурою. Тифлисъ, 4-го ноября 1895 года.

Իմ այդ ստուար գործը Գրաքննիչից ստանալով՝ կամենում էի տպագրութեամբ լոյս ընծալել, որ ամենքին մատչելի լինի, բայց Ս. Եջմիածնի տպարանի պայմանները (որովհետեւ Հայկական ձախանիշները միմիայն Ս. Եջմիածնի տպարանի սեփականութիւն են և ուրիշ տպարաններում չկան), իմ այդ նպատակն ու ծրագիրը առ այժմ յետաձգել տուին:

Իսկ թէ՛ ինչից ստիպուած այժմ շտապում եմ լոյս ընծալել սոյն երգարանը թերի և առանց ձախագրութեան՝ ահա ասեմ: «Նախ՝ որ գոնէ մեր կողմերում, արսինքն Շիրակում, պահանջ կալ մի այսպիսի ամփոփ երգարանի, որոնց երգերն ու եղանակները ընդհանրապէս ծանօթ և տարածուած են ժողովրդի մէջ. և երկրորդ՝ որովհետեւ իմ նախկին երգարանի համար բաժանորդագրութիւն էի բաց արել և շատերին լայտնի էր երգարանիս լոյս տեսնելը, այդ իսկ պատճառով այժմ ստիպուած եղալ, թէև կրկնապատիկ աշխատութեամբ, ամբողջ ձախագրեալ երգարանս գլխովին խախտել, ձախագրեալ մասը թողնել և համառօտելով ու կրծատելով, միմիայն եղանակների անունները վերնագիր դնելով (ինչպէս Դիւանի, Սէմայի Ղօշմայ և ալլն) առ այժմ մի մասը հրատարակել: Թէև շատերն այդ անունները կարդալով չեն կարող գիտենալ, կամ մտաբերել եղանակները, բայց շատերն էլ կարող են օգտուիլ: Իսկ որքան հնար է, գարձեալ պիտի աշխատեմ իւրաքանչիւր եղանակից գոնէ մի տուն, առանձին թերթերով, ձախագրութեամբ հրատարակել և ցանկացողներին ու ձախագրագէտներին, իւրեւ երգարանիս լաւելուած, ուղարկել, մինչև որ բարելաջող հանգամանքներն ու ժամանակը օգնեն և նպաստեն ամբողջ ձախագրեալ լիակատար երգարանս լոյս ընծալելու:

Դպ. Արշ. Բրուտեան

ԱՐԱՋԻՆ ԲԱԺԻՆ

ԱՅՈՒՂԱՎԱՆ-ՌԱՄՎԱԿԱՆ ԵՐԳԵՐ

ՄՈՒԽԱՄՄԱՋԻՉ

«Երբ զօրաց Տէրն Աստուած օգնել կուզէ որբ ազգին¹) Նրա մէջը կուզարկէ ազգասիրութեան հոգին²):

Գիտես, արգեօք, ո՞ր հոգին, կամ ո՞ր ազգեցութիւնն. Ոյն Եսթերայ թագուհւոյ ստորագրութիւնն, Կամ ընդ նմա Մուրթքէի քաջ ազգասիրութիւնն, Որ ապրեցոյց Յակովը ցիրուցան եղեալ տունն, Ոչ ծննդական ձիրքն, ոչ հայրական տրիւնն, Այլ վերոիշեալ հոգւոյ պարգևն էր թանկագին:

Ազգասէր մարդոյ միտքն ալեկոծեալ կ'լինի, Երբ իւր ազգն այլազգեաց ստորանկեալ կ'լինի, Բարի նախանձն ՚ի նմա անշէջ վառեալ կ'լինի, Թէև յԱրամեան գահին մտօք բազմեալ կ'լինի. Բայց վիճակաւ մէրթ անսրգ, մէրթ զրպարտեալ կ'լինի, Սակայն երբէք չե խախտուիլ սէգ և անդարձ գլխովին:

Ազգասէր մարդոյ տունն խաղաղութիւն կունենալ, ճշմարտօրէն ասուլիս պարզ գրութիւն կունենալ:

¹ և ² տողերը պէտքէ կրկնել իւրաքանչիւր տան վերջում:

Թէ ողջ ազգին՝ թէ անձին—մէկ ընտրութիւն կունենալ,
Որքան միտքն, կամ սէրն տարածութիւն կունենալ,
Ազգասէրն նոյն չափով՝ շուք և անուն կունենալ,
Վերընծալուող Արարչին և անձնատուր Կալսերին:

Երբ տասընամեալ լինի ազգասիրի զաւակն,
Իւր հայրենի լեզուաւն կը գրէ իւր նամակն,
Հաւատոյ Հանգանակն և ծիսից նպատակն,
Այնուհետեւ կշարժէ իւր մտաց աշտանակն,
Այլ և այլ լեզուաց տալով իւր ուսման ժամանակն,
Ինքն ինքեան կ'լինի համալսարան իւր ազգին:

Ազգասէրն կ'ցանկալ իւր ազգի փրկութեանն,
Նաև նորա լաւապէս լաշխարհի կեցութեանն,
Խաւար ազգաց մէջ՝ նորա պարզ լրւսաւորութեանն,
Քաղաքական կանոնին, կրթութեան աստիճանն,
Թէ առ Աստուած, թէ առ մարդիկ տալօրինաւոր բանն,
Ոչ իւր անձին կը ընտրէ, ոչ ազգական ընկերին:

Բայց ես անբաղդ և անյուս է իմ վիճակն ինձ համար,
Ծրարեալ պահուած մնաց ուսման նամակն ինձ համար,
Ոչ պիտանի, ոչ լարգի մարմնեղէն ակն ինձ համար,
Այլ իբր միջօրեալ լոյս կայ իմ փափազն ինձ համար,
Ծեր Կռոնոսն¹⁾ է գառել իմ ժամանակն ինձ համար,
Զի՞ք ազգասէր այնպիսի, որ ասէ, վայ քեզ Շիրին:

Մ Մ Խ Խ Մ Մ Բ Բ

Քու մասին, իմ աչքի լոյս, ինչ ասում եմ՝ լաւ եմ ասում,
Յաւում եմ՝ ափսոսում եմ, ունելով իրաւ եմ ասում,
Ամեն տեղ, ամեն բանում՝ քեզ քաջահամբաւ եմ ասում,
Քու խորհուրդը ամենի մօտ մի անիլ չաւ եմ ասում,
Քու անզգով՝ մնալով՝ ինձ համար մեծ ցաւ եմ ասում:

Գանձը ժանգի համար է՝ մարդուս անունն է գովելի,
Բարի ընթացքը՝ կատարեալ կեցութիւնն է գովելի,
Անունի տարածուիլը՝ անհատ արդիւնն է գովելի,
Դու մի կարծիլ՝ թէ միայն գեղեցկութիւնն է գովելի,
Պակասամիտ սիրունին՝ ես մին գատարկ գաւ եմ ասում:

Բայց ասեմ, գեղեցկութիւնն Արարչի մէկ պարգերն է,
Հողանիւթ գուացելոց՝ մէկ բարերեր անձրելոն է,
Բայց շուտով կ'թարշամի՝ արմատը չէ—տերելոն է,
Դիտութիւնն, ով աչքի լոյս՝ մարդուս երկրորդ արելոն է,
Ոչ գիշեր կընդունէ՝ ոչ կը սիրէ սետւ եմ ասում:

Ինձանից միտք ծախուածու, անհոտ բուրաստան մի լինիլ,
Խրատի միշտ կարօտի, շատ ինքնահաւան մի լինիլ,
Դու բարոյն լեր փափազող, չար սովորութեան մի լինիլ,
Անփայլ լուր մի հանիլ՝ կամ փատարերան մի լինիլ,
Մի թողուլ թանգ օրերդ փատկեցութեան քրաւ եմ ասում:

Գիտում եմ, որ լարգի է իմաստութեան քարը քու մօտ,
Շատախօս չի երեխի՝ ինձ նման անձարը քու մօտ,
Տեսնումեմ շնորհաց ոգին և գիտութեան բարը քու մօտ,
Ամենելին չեմ ուզում, որ զօրանալ չարը քու մօտ,
Ես Շիրինս ահա քեզ խորհուրդս լեզուաւ եմ ասում:

¹⁾ Հեն Յունաց շաստուած, որին կ'ձեւացնելին ալեզարդ ծուռունու նման՝ ձեռքին գերանդի և մանզադ:

Պ Ե Լ Ե Խ Տ Ե Բ Ի

Բիւլբիւլ քոյ նման, քեզ վերալ փափադ չունի վարդըդ,
Սէր վայելելու միթէ ժամանակ չունի վարդըդ,
Զէ որ քու անունդ նորա հետ պատմողը մենք ենք,
Դարձեալ գիտում ենք, որ սիրոյ մուրհակ չունի վարդըդ:

Քո վարդուհին իմ բաղդից անգութէ, ով անճար,
Իմ սիրականիս չափ խնամ անքակ չունի վարդըդ,
Եր ծառը փշալից, հովանին անգամ օձանիստ,
Եր արիւնն իրա մէջ իստակ չունի վարդըդ:

Թէպէտ Մալիսի ծնուած է, բայց Յունուարալ չունչ է,
Ամպով է պատած, երբէք արեգակ չունի վարդըդ,
Թէ մարթէ սիրել՝ համասփիւսին սիրէ բացարձակ,
Որովհետեւ անանցնելի վիճակ չունի վարդըդ:

Տասնումէկ ամիսդ գու նորան ծախում ես անշուշտ,
Բայց քո մէկ օրդ գնելու ստակ չունի վարդըդ,
Վարդիցը, Շիրին, պատմէ սոխակին, քանի որ կաս,
Եւ կրկնէ տուլով, թէ հեղինակ չունի վարդըդ:

Մ Ի Ւ Ց Ա Զ Ա Ց

Ակնարկեա, ով իմ սիրուհի, ակնարկեա տկարիս,
Օգնեա սիրահարիս.

Մերթ իմ նեղութեան և հասու լեր, մերթ գեղ ու ճարիս,
Տնը անմիխթարիս:

Անբաղդութեանս ձեռքիցը ողորմելի եմ շտա,
Երբեմն էլ յուսահատ.
Սփսնս, հազար ափսնս, ապա վնալ ինձ խելագարիս,
Պանդուխտ և օտարիս:

Մինչ Երբ աղաղակս չը լսելով մնամ այսպէս,
Հայցեմ խնամ այսպէս.
Թէ և քո տրարքդ, յիրաւի, շատ չէ լիմարիս,
Ամօթ բարերարիս:
Սիրոյդ աղեղը ինձ վերալ լարուած կալ յարաժամ,
Սպանուած եմ անգամ.
Սրեան ծարաւի սէրըդ է ահարկու խոնարհիս,
Ներհակ կալ աւարիս:

Որքան փարելով ձայնեցի անգութ սիրականիս,
Այն ինչ հոգեհանիս.
Իսկ նո սաւուզազգեաց չի նայող թութակ շաւարիս,
Տասնազեալ քնարիս:
Ես իմ ժամանակիս գումարը բաշխեցի սիրոյդ,
Գրաւ եղի անփոյթ.
Էլ այսուհետեւ ինչ է պակստ մահուան յօժարիս,
Բաղդով ապիկարիս:

Ես համտհաւատար հիմա որդւոյն Պենելոպեալ,
Ինձ սէրը Կալիփուեալ.
Թէ՝ որքան էր անթիւ, հիմալ պատմեմ նաւազարիս,
Նա վայ կրկնէ չարիս:
Ալս քսն լողոքը իմ սիրելոյս կարդացի ես ողջ,
Ականջ գրաւ ամբողջ.
Ասաւ—դու, Շիրին, պէտքէ սիրուս մէջ չը գադարիս,
Մինչ ինձ հաւասարիս:

Գ Ի Ւ Ն Ի

ԵՇ Զումա, սաննտան նիչա սըռլար նումտյեան էթտիլար,
Ավիալար օլ սապապ իսմըն բէ բավշան էթտիլար,
Սրի մավլա մահպուս օլտի շապափ նիֆունտա սանըն,
Փուս էտանտա գեօրտուլար չաք ու գիրիպան էթտիլար:

Գիւֆտի գիւհի Դավուտն օլտամ, թամամ օլտու, թամամ,
Օն իքի Փարվարտիլար, քիմ բահպարիան էթտիլար,
Հիլէի շարիաթիլա օյնաթտըլար երտան երա,
Շար էտանըն շանընալ, շարիաթ ու դիվան էթտիլար:

Դաստընի քիմ եալխատի օլ քեաֆարի խուտպի խոլալ,
Զալիփայա սալվարիշտ աստէի ջան էթտիլար,
Քիմըն վուրտու շամար, քիմի զարաֆատ գլմտան,
Գիւլ Ռուպասի սօրտուլար, խոր ու խարիգեան էթտիլար:

Դաստի վալընտա շահընտ հանկի մըսմառ իշլատի,
Ավկալա խալդ օլմուշում աշգընտա դուրբան էթտիլար,
Սազի սօլնտա անըն խուտպի քեաֆարան գիւզտուլար,
Միւնտուլար զահըն ջամի թաշնա գիլի դան էթտիլար:

Մաֆտա գեալտի մաֆթի հիւմմաթտան փարաղաթ էլլատի,
Էլլիանլար, Էլ Շիրին, մաֆտի զատիման էթտիլար:

Գ Ի Ւ Ն Ի Ո

Անխզօրէն մեզ գատում են,
Խոսիք Հայաստանի լեռներ:

Եղբարցս ինձանից զատում են,
Խոսիք Հայաստանի լեռներ:

Իմ խնդրիս չեն դնում ականջ,
Ասում են սուտ է քո պահանջ,
Ոյս հողերը ումն էր յառաջ,
Խոսիք Հայաստանի լեռներ:

Գուցէ լիշէք դուք այն օրը,
Որ պապս լծած արօրը,
Յանում էր ձեր դաշտն ու ձորը,
Խոսիք Հայաստանի լեռներ:

Գիտեն իմ պապիս անունը,
Բայց ստում են ուղղութիւնը,
Գոնէ նորա պատմութիւնը,
Խոսիք Հայաստանի լեռներ:

Հիմայ ձեզ մնաց ամեն բան,
Պէտք է դուք գաք վկայութեան,
Ումնով էք կոչվում Հայաստան,
Խոսիք Հայաստանի լեռներ:

Պայծառէն վիրաւորել են,
Հովերուն հաւասարել են,
Մեր կալքը օտարք տիրել են,
Խոսիք Հայաստանի լեռներ:

Գ Ի Ւ Ն Տ Ի Ր Ի Մ Ո Ւ Խ Վ Մ Մ Ե Ջ

Կոյս, իմ սիրուհին ընական՝ Աստուած վկայ գու ես,
Չունիմ ես ուրիշ սիրական, Աստուած վկայ գու ես,

Աշխարհի մէջը գովական, Աստուած վկայ դու ես,
Եւրդ քաշողին հոգեհան, Աստուած վկայ դու ես,
Քմահածոյ վարդ ու շուշան, Աստուած վկայ դու ես,
Դրախտը ծոցիդ վարդարան, Աստուած վկայ դու ես:

Պարտիզումը մանիշակը, քեզնից գեղեցիկ չէ,
Ոչ քրքումը, ոչ մեխակը, քեզնից գեղեցիկ չէ,
Ոչ գիշերախն լուսնեակը, քեզնից գեղեցիկ չէ,
Ոչ արե ու արուսեակը, քեզնից գեղեցիկ չէ,
Մինչ երկնալին հրեշտակը, քեզնից գեղեցիկ չէ,
Զկայ քեզի համանման, Աստուած վկայ դու ես:

Զի՞ որ դու ես իսկ պատճառը, ազնիւ սիրական իմ,
Որ վառվում է կեանքիս ծառը, ազնիւ սիրական իմ,
Թէ կ'սիրես Ասսու գառը, ազնիւ սիրական իմ,
Լից վառ կրակիս ջուր սառը, ազնիւ սիրական իմ,
Ապրեցու քու խեղճ Պայծառը, ազնիւ սիրական իմ,
Զի Պայծառուս իսկ պահապան, Աստուած վկայ դու ես:

Պ Ա Բ Ց Է Զ

Իբրև Արաքս ես հոսում եմ,
Ուր է պահապանդ, պարտէզ,
Չը ջրուելուդ ափսոսում եմ,
Ուր է պահապանդ, պարտէզ:

Ահա անգութ արեգակը,
Քո մէջ լցնում է կրակը,
Ալբում է մինչ քոյ յատակը,
Ուր է պահապանդ, պարտէզ:

Պտղատու ծառդ չորացաւ,
Եւ անունդ ստորացաւ,
Միթէ բաղդը քեզ մուտցաւ,
Ուր է պահապանդ, պարտէզ:

Ծաղիկներդ խունանում են,
Վարդերդ օտարք տանում են,
Սոխակներիդ սպանում են,
Ուր է պահապանդ, պարտէզ:

Զկայ քեզ նման վարդարան,
Բալց վարդերդ օտարք տարան,
Սոխակներդ ուր կը կարդան,
Ուր է պահապանդ, պարտէզ:

Պահապանըդ տկարացաւ,
Միթէ քոյ բաղդը կուրացաւ,
Անզօր թշնամիդ զօրացաւ,
Ուր է պահապանդ, պարտէզ:

Պահապանդ պարտաճանանչ,
Տկարացաւ, ով մեծասքանչ,
Թառամեց բոլսերդ կանանչ,
Ուր է պահապանդ, պարտէզ:

Դու պտղատու պարտէզ էիլ,
Իմ նախնեաց ասպարէզ էիլ,
Ծառդ միշտ կանաչ կուզէլը,
Ուր է պահապանդ, պարտէզ:

Ինձի վարձել է քո տէրդ,
Որ ժողովեմ ծառաներդ,
Նորոգեմ հնացեալներդ,
Ուր է պահապանդ, պարտէզ:

Պայծտու Տրդապէտնս մենակ,
Քո մասին ողբօւժեմ տնկագ,
Մինչև Երբ մնաս աւերակ,
Ուր է պահապանդ, պարտէզ:

ՔԵՐՊԱՄԻ

Հեռացէք, ով ամպեր, գնացէք հեռու,
Ալս մութ երկըրտմը տրեգակ տեսնենք,
Չեր սե երեսովը մնացէք հեռու,
Դոնէ մենք էլ մի պարզ եղանակ տեսնենք:

Քանզի մեր երկըրին պատճառել էք մութ,
Վասնորոլ մենք գործից՝ չենք քաղում օգուտ,
Սրգեօք մինչ Երբ ալդպէս դուք լինիք տնդութ,
Քաշուէք, գոնէ գիշերն արուսեակ տեսնենք:

Արգեօք ձեր անունը գրենք ի՞նչ տառով:
Չէք արժան, որ խօսինք Հալոց բարբառով,
Պայծտու չգիտեմ, թէ ձեր պատճառով,
Մինչ Երբ մեր երկիրը աւերակ տեսնենք:

ԿՈՋԷԼ

Ալս, անիրաւ տիրութիւն, մինչև Երբ ինձ տիրես,
Մինչև Երբ իմ սրաի, ուրախութիւնն աւերես,
Մինչև Երբ տանջես ինձ, մինչև Երբ, ով անգութ,
Մինչև Երբ լուսափալ արեգակս մնալ մութ:

Մինչև Երբ, ասա ինձ, մատաղ կեանքս տրորես,
Մինչև Երբ տիրութեան օրօրոցումն օրօրես,
Մինչև Երբ յաւալիս մնամ դառը վիճակում,
Մինչև Երբ դառնութեամբ այրիմ ես կրակում:

Մինչև Երբ տիրութեամբ շարադրեմ երգերս
Տրդապէտնյս, տակաւին չը բժշկած վէրքերս:

ՂՈՅՄԱՑ

Սիրելիս, ոչ ոքից դու մի նեղանար,
Որ քեզ չես պաշտպանում, ով է մեղաւոր,
Ծախսումես-մխսում ես միշտ շուալաբար,
Գործդ չես ճանաչում, ով է մեղաւոր:

Ալն որ փողոներում շրջում է քաղցած,
Շորերը կեղտոտած, վարուց հնացած,
Խնդրեմ ասէք, նրան ինչ անէ Աստուած,
Խնդրը չէ աշխատում, ով է մեղաւոր:

Ալն որ հետեւում է մշտապէս չարի,
Ի հարկէ իւր ոտքը կը գիպչի քարի,
Թէւ իրատ տուողներ ունի քարի,
Բայց նոցա չի լսում, ով է մեղաւոր:

Լսիր, քեզ եմ տառում, չարեաց հեղինակ,
Գործում ես չարութիւն ամեն ժամանակ,
Անում ես վատութիւն հազար մի տեսակ,
Բանդի ես մատնուում, ով է մեղաւոր:

Պայծտու, դու էլ մտածում ես անդադար,
Եւ յուսահատվում ես՝ իբրև մի լիմար,

Ապագալ հոգսերդ հոգալու համար,
Հինգ կոպէկ չես պահում, ով է մեզաւոր:

„ԺԵՄԵՐԻ ԺԵՄԵՐԻ“ ԵՐԻՒ ԵՊԸՆԸՆՈՅՆ

Դիշեր ցերեկ մօրմոքում եմ, ինչ անեմ,
Կարօտդ քաշումեմ տարով, նազանի,
Հանգիստ չունիմ, անդադար եմ քեզ համար,
Ցաւերս թեթեցուր սիրով, նազանի:

Մէկ տեսքդ տեսնողը քեզնից կամտեչէ,
Ծանօթացիր, սիրականիդ ճանանչէ,
Հաղածդ զգեստը ալ ու կանանչ է,
Փախթառել ես ճերմակ զարով, նազանի:

Թաղաջնուն խմեց երազումը թաս,
Քաղցրանաս, դու մեզի անուշ բարեւ տաս,
Երանի այն օրուան, որ մեր տունը դաս:
Պարտուիմ գլխովդ բարով, նազանի:

ՊԵՇԵՐ

Մէկ գիշեր երազով գեղեցիկ տեսալ,
Առաւ ուշքս գլխէս, տարել է ընձի,
Տիւ և գիշեր հանգիստ չունիմ անդադար,
Կորած մենծ ցաւերը ճարել է ընձի:


Մաշուաւ կեանքս ընձի կրակ բոց էլաւ,
Ոչ մի խորհուրդ տուեց, ոչ էլ բաց էլաւ,

Վատ լեզուովը խաբեց, մտքով լաց էլաւ,
Սիրտս իրան սիրովը, մաշել է ընձի:

Բալալ թաղաջնուն իրան եմ աշում,
Մտածում հալվում եմ, կեանքս եմ մաշում,
Ոչ մի ողորմում է, ոչ էլ ձեռք քաշում,
Գուշնը բռնաւոր արել է ընձի:

ՄԱԿԱՐԱ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

7/31-1922



Վատն զի մնացիր անջուր, ունիս Եփրատ, Բուրաստան գու,
Ուր է պարտիզպանդ, ձայն տուր, արա գանգատ Բուրաս-
տան գու,

Զէ որ մէկ ժամանակ անկախ էիր ազատ, Բուրաստան գու,
Ունէիր բարեկերտ տունկեր, պտուղներ շատ, Բուրաստան գու,
Կեցար անօգնական, անտէր, նիշար, աղքատ, Բուրաստան գու,
Բաւտկան չէ մնաս ալդպէս գրութեան վատ, Բուրաստան գու:

Տեսար որ վայրենի - անբնակ անտառը դարձաւ, պարտէզ,
Գարունդ, ոհ, ձմեռ դարձաւ, պահապանդ սառաւ, պարտէզ,
Էն օրից մինչեւ ալսօր մնացիր դու ծարաւ, պարտէզ,
Քո ձեռքէդ թշնամին կալքդ խլեց - մաս մաս արաւ, պարտէզ:

Կտակդ Եանշանին կարդաց, պահապանդ՝ պահապան չէր,
Բոլոր ծառաներդ տմբողչ, միարանդ՝ միարան չէր,
Միթէ վարդերի հետ անհոտ բալասանդ՝ բալասան չէր,
Թողեց քեզ նտ, սիրեց ալսօց, սիրականդ՝ սիրական չէր:

Վատն զի մնացիր անջուր, ունիս Եփրատ, Բուրաստան գու,
Ուր է պարտիզպանդ, ձայն տուր, արա գանգատ, Բուրաս-
տան գու:

ԵԱՆՔԱ ԳԵԱՐԱՄԻ

Տէր իմ, թռչունի պէս թեւ տնւր թռցրու,
Հասցնւր Արարատի կատարը ինձի,
Նկատեմ աշխարհին, կրկին դարձրու,
Մի թռղուր մնալու էն սարը ինձի:

Կաղազեմ, նիհարիս տնւր առողջութիւն,
Օրերո միշտ կանցնի անաջողութիւն,
Ոչ ապրուստ տուեցիր, ոչ կարողութիւն,
Ի զուր ինչք բերիր աշխարհը ինձի:

Եանցւնին եմ, ողջութեան նշան չունիմ,
Խնդութեան վիճակից աստիճան չունիմ,
Անզգամութեան հետ երբէք բան չունիմ,
Ես խոնարհին գիտեմ, խոնարհը ինձի:

ԳԵԶԱԼԱՄԱՑ

Երանի թէ շուտով ննջած լինէի,
Զը տեսնէի տխուր, Հայաստան քեզի,
Կամ նման տզգասէր անձն լինէի,
Կետնքս նուիրէի ազատման քեզի:

Չունիս մէկ ցաւակից, չունիս օգտակար,
Հոնի, մինչև երբ մնաս առանց մխիթար,
Մոլորուած ես ինչպէս անհովիւ ոչխար,
Այժմ պառակտում են գալլ գագան քեզի:

Ճիշտ գիտեմ, այս պատիժն է մեր մեղքերէն,
Մեզօք բարկացուցինք Աստուած մեր վրէն.
Գիւցեազէնս տեղեկացայ գրքէրէն,
Հիմա Տէլն է էնող գատաստան քեզի:

ԱՅՍԱՑԻ

Ճառագալթ լոյս փառաց տնմահ թագաւոր թանգարանս բաց,
Լուսատու պատուհաններս մութմի թողուր, գանձարանս բաց,
Փոքր մարգարտաչափ, Տէր, շողջողուն կամիլ ջուր կաթցնւր,
Զովացնւր բորբռքած սիրտս, բերանս բառարանս բաց:

Քո սուրբ տնմահ անունդ օրհնելավ միշտ անգագար
կարգամ,
Սովորնեան շաւաւիզ գերիժ Դաւիթ սակմոսարանս բաց,
Նժոյգներ սանձեցին անխիզճ, անիրաւ, անհաւատ մարգիկ,
Մունետիկ ձայնում է մարտ է, օձախիշտ գաւազանս բաց:

Խօսողներ շատ ունինք երգիչներէն անհամ սոխակ, Զաշքի,
Սո գիտ տատրակներէն չէ քո Կարտապետ, վարդարանս բաց:

ՂԵՅՄԱՑ

Կարգացէք իմ բաղդի նամակի սեր,
Երեսում է ինձի օտարի նման.
Սկսեց թառամիլ կեանքիս տերել,
Զմռան ժամանակի Յունուարի նման:

Ալս անիրաւ բաղդս ինձի յոյս տալով,
Մնացի մորմոքած, ողբալով, լալով,
Ցաւովս տապում եմ աշխարհ՝ մտնգալով,
Անհովիւ մոլորուած ոչխարի նման:

Ալս անիրաւ բաղդէս՝ հաշիւ չունեցալ,
Երկինքը սլացող՝ արծիւ չունեցալ,
Պանդուխտ աշխարհի մէջ՝ պատիւ չունեցալ,
Համարում են ինձի յիմարի նման:

Ո՛հ, անիրաւ բաղդից՝ մի բան չիմացալ,
Մէկ տարիից մինչի՝ երեսունն անցալ,
Զարմանք չէ որ, ալս ցաւերին դիմացալ,
Երկաթիցը ամուր՝ լեռ քարի նման:

Զաշին եմ, աչքից ցողը պակաս չէ,
Երեցած սրտից՝ բովը պակաս չէ,
Գիշեր ցերէկ գլխիս հովը պակաս չէ,
Անբաղդ Արարատեան մեծ սարի նման:

Թ ի ծ ն ի ॥

Կորդացել եմ ալբուբենը առաջին,
Գիմ ու դան մոլորուած՝ կէտին եմ նայում,
Համար տալիս իմ վարպետի առաջին,
Երկիւղ ունիմ, ձեռի կէտին եմ նայում:

Պարան գցած՝ անում եմ հաղ օղիցն,
Շատ կան գանգատ անողներ հաղողիցն,
Փախս եմ տալիս վատ հաղեր հաղողիցն,
Գլուխս խոնարհած՝ գետին եմ նայում:

Ալս կեանքն է մեզ համար՝ իսկ և իսկ ունալն,
Վաս գործքեր տեսնելիս՝ գու փախիր ու նան,
Տես թէ ուր աղօթեց Մարգարէն Յունան,
Բօրչչէն եմ, էն ձկան՝ կէտին եմ նայում:

Դ ի ի Ա ն ի

Տարակուսած ման եմ գալիս շատավէրս ինչ անեմ,
Ում պատմեմ սրտիս խորհուրդն, ով է ծերս, ինչ անեմ,
Անուսում եմ — ուսում չունիմ, յոյս կտրած ման եմ գալիս,
Կատարեալ ուսման չ'տուին հէրս ու մէրս, ինչ անեմ:

Հարկաւոր է ամենայն մարդ իր վիճակէն գոհ մնալ,
Թէ աղքատ ենք, թէ հարուստ ենք, իմ ընկերս, ինչ անեմ,
Ում որ բարի կամեցալ՝ վերջումն վատ էլալ ես,
Աւելցրին տարէց տարի վիշտ ցաւերս, ինչ անեմ:

Ի բնէ գու անբաղդ էիր — բաղդիցդ կոլը մնացած,
Քեզ էդպէս ըստեղեց, Բօրչչէն Յիսուս Տէրս, ինչ անեմ:

Մ Ճ Ե Ց Ո Ւ Ե Ր Կ

Էս ինչ թաւուր քար չիկար եմ,
Թորկեր եմ զիմ ճըժերն 'ի չու,
Բառատալ խլիխն բէկար եմ,
Կու կլտրուտեմ բէուդա սօլ:

Խէրիք մնամ էլու դռներ,
Էրթամ դտնիմ զիմ խեղճ գառներ,

Զըեմ զիմ բօստընի ծառներ,
Եինիմ ընտոր լաղբուր ու գոլ:

Չուր Եթ դատիմ ես խաց փորի,
Ու դան իմ աւախք կորի,

Ես կու պարկիմ դօշակս է բոլ:

Սէֆիլ Անօս մնաց լալով,
Մեռաւ խլխի պարտքեր տալով,
Չուր Եթ մնալ խերուան շալով,
Կրպէն խաղալ տուանց դըհօլ:

ԹԻՐԵԿԱՆԻ ԳԱԽԱՑՔ ԱՒԹՈՒՀՈՒՑ.

Ես քեզ սիրի, որ գու ընծի չը թարկես,
Եթէ թարկես՝ հոգով մարմնովդ խարկես,
Անիծեմ, տաս տարի տեղումդ պարկես,
Եօրզանի մէջ տքալ կողերդ, աղջիկ:

Ում հետ էլ որ էրթաս՝ հետդ չը վարուի,
Պսակուելուդ օրը՝ քօղքդ սև կարուի.
Հօրդ տուն ու գուռը սև քարով շարուի,
Ախ ու վախով մնալ աղբէրդ, աղջիկ:

Մօրդ լեզուն ուռի, բերանը փակուի,
Քառսուն օր տանջուի՝ հոգին չը քակուի.
Ընձնէն զայրի հետդ ով որ պսակուի,
Իրեք օր չը վելէ սէրդ, ալ աղջիկ:

Զդանիս խամ կտաւ էնես արխալուդ,
Նէն-բոլ աշխարհքի մէջ օրըդ անցնի սուդ.

Հացդ կորեկ էղնի, գարին հետը կուդ,
Օձի պէս սակաւի քու կերըդ, աղջիկ:

Ես մէկ խեղճ տղալ եմ, էրի քեզ գիւման,
Աստուածածինն էնէ քու մօրդ գիւան,
Իր կենաց մէջը նա՝ չունենալ սաղ ջան,
Որ ինձ էրաւ տնից գարբէդար, աղջիկ:

Պատճառն ի՞նչ էր, որ չ'հաւնաք գուք լնծի,
Կարօտ էք գովլաթի, փափագ էք գանձի,
Առաջ խօսք տուողի լեզուն պապանձի,
Տանողդ չը տեսնի քու խէրդ, աղջիկ:

Ալագեօզ աչքերդ, կամար ունքերդ,
Ուզում եմ հեռանամ՝ չի թողնում սէրդ,
Քեզի լնծէն էրաւ քու քեափիլ մէրդ,
Խնդրում եմ շատանալ վերքերդ, աղջիկ:

Ես Զաւշաշալին եմ, գարդովդ եմ կեցի,
Դիշերն եմ մտածի, ցերեկն եմ լացի.
Տասը տարի խաթրիդ ազապ մնացի,
Ծակծկի ծոցիդ մէջ ծծերդ, աղջիկ:

Գ ի ի Բ ի ի Թ

Էս օր մի նազանի տեսալ՝
Զիլիֆները օլլրած էր,
Երեսը տասնուհինդ աւուր
Լուսնի նման բոլլրած էր:

Աւազը բիւլբիւլի պէս ա,
Կարօտ եմ, մէկ հետս խօսալ,

Էկել էր մեր թաղը՝ տեսալ,
Մակեամ ճամբէն մոլլըրած էր:

Հայած-օշլին եմ մէկ հարքեամ,
Քու գարտէն կապել եմ վարամ,
Ասի պաչըմ արա քեարամ,
Երեսը թարս խոլլըրած էր:

Գ ի ի Ը ն ի

Հեքիմ, Աստուածդ կը սիրես, ազալիս պայման արա,
Առ ուզածդ, մի՞ խնալի, նոր գեղդ սահման արա,
Վերև Աստուած, ներքեւ քեզի, ումուգ արել էկել եմ,
Մէկ ճար արա—կենդանացու, եան օրս մահուան արա:

Մախսուլի պէս յաղթուել եմ, կուլամ օգնական չունիմ,
Զանլաթի դալրալ դազապից՝ անեարայ տեղ ջան չունիմ,
Մավալի անգին Քրիստոսից, ուրիշ գիւման չունիմ,
Էս աշխարհի մէջ խօսելու մէկ նշանաբան արա:

Երեանու նահանգից եմ, բինէս Թաղւեղ գիւղացի,
Դարդ ունիմ դարման անելու, աշխարհս բոլորեցի,
Դարդիս դարման չը գտնելով, օրերս երկարեցի,
Մի թողնի ինձի մոլորուած, դարտլուիս մէկ եան արա:

Ո կ Պ Ա Յ ի

Բոլոր երկիրներէն ինձի համար քաղցր Հայաստաննէ,
Ի հարկէ, հայրենիքս այնտեղ է, բարձր ապաստանն է:

Վենետիկ, Ամերիկալ տաղուած աղէկ տալասին նոյէ,
Քնընէ աշխարհացոյց տախտակը՝ Պանտոսը սահմանն է:

Ունենանք աղքատ անձանց տաղուածու ու խօթաց հիւան-
դանոց,
Մեր ազգին կրթութիւն տուողը դպրոց ուսումնարանն է,
Տղէտը երջանկութեան գիրքը դաս առած աւարտած չէ,
Ամեն կերպ ազգեցութիւն պատճառողը համալսարանն է:

Փիսովն, Եփրատը կելնեն շտամով մը Հայկալ լեռներէն,
Բիւրակն իր սարը, գաշտը Արմենակի վարդենատանն է:
Հոտաւէտ ծաղկըներու գոյնը բացարձակ կը փալի հոն,
Ճառագալիթ արձակողը ծաղկըներու մէջ շուշանն է:

Հայաստան աշխարհումը տնկեց ինքը փափկութեան
պարակ,
Հոտաւէտ, գործեց այնտեղ առաջին մարդու բուրաստանն է:

Պ է Լ է Խ Տ է Բ ի

Ծաղկիր գու շուշան յանկալի գարունն եկաւ անցաւ,
Դարձեալ անուշիկ հովերի հնչիւնն եկաւ անցաւ,
Տեսնում եմ ամեն ծաղկիը բողբոջ ու կանանչ է,
Դեռ գու մնացել ես, աւազ, աշունն եկաւ անցաւ:

«Յոյս չիք շուշանին ծաղկելու», շատերն ասումեն ինձ,
«Քանզի ծերացել է, նորա արբունն եկաւ անցաւ».
Յալտնիր քո նորոգման օրդ սիրահարիդ լոյս տուր,
Անդադար է նա, աչքերիցը քունն եկաւ անցաւ:

Խնդիրը Խայտեռն ստ է փակ մի մնար, բացուիր,
Չասեն թէ միայն իւր մի լոկ անունն եկաւ անցաւ:

Ա Ա Ն Ա Պ Ջ Ա Ա

Ա՛խ, Երբ պէտքէ երեաս, ով գու գարունդ աննման,
Գիմես երբեմն մեր աշխարհ՝ ու գաս մեզ ալցելութեան,
Տաքացնես երկիրը, վանես ցուրտը ձմեռուան,
Յօղես անձրեներ առատ, արդիւնաբեր, մշտական,
Ծաղկին դաշտերն ընդհանուր, հոտ բուրեն անմահական.

Մօտենալով վազճանին բքաբեր Մարտ ամիսը,
Ալցելութեանդ կսպասէ ծերունի խեղճ Մասիսը,
Դէհ, ժամըն է, արձակէ գալստեանդ տւետիսը,
Քաղցը ու անուշ հոտերով մեզ ընծալէ Մայիսը,
Չիւնապատ լեռներուն էլ սփոէ կանաչ ցնծութեան:

Մառախլապատ ամպերով ծածկուած անտառները,
Արգելք եղան փարախից շուտ գուրս գալու գառները,
Երեսւմեն խիտ ծաղկանց փոխարէն մացառները,
Նորոգուելու կսպասեն տերեաթափ ծառները,
Թէ, Երբ պէտքէ մեզ վերալ արեգակդ առնէ շրջան:

Կարկաչահոս գետը լուռ հոսում է սառուցի տակ,
Ե՞րբ կը ծագէ պաշտելի Մասեաց սարէն արեգակ,
Հիւսիսուին պաղ քամին մինչ Ե՞րբ փչէ շարունակ,
Չմռան ոսոփ գարունդ, արի ու տար լազմթանակ,
Պարզ օդի մէջ ծածանի սուրբ գրօշակդ անկործան:

Ոմբողջ տարուալ նախագահ, նշանաւորն ես, գարնւն,
Մնացեալ ամիսների գու փառաւորն ես, գարնւն,
Հողալին գնդի պարծանք ու թագաւորն ես, գարնւն,
Ազատութեան աւետիք բերող իսկ օրն ես, գարնւն,
Պորա համար Խոյտեն էլ վափագ ունի քո տեսլեան:

Ե Մ Ե Ւ Ա

Բազմացան վէրքերս, սաստիկ բազմացան,
Մինչև անզամ թիւ ու համար էլ չկալ.
Բժիշկները տեսանելով գարմացան,
Մահ կարդալով տաին—քեզ ճար էլ չկալ:

Սիրոս Օրամայի և Նորի նման,
Գոտել է, կը ողբայ Յակոբի նման,
Միսիթարելու չափ ինձ Յորի նման,
Մէջս իմաստութիւն—հանձար էլ չկալ:

Միաքս ինձի կամի շարժել վատութեան,
Նաև թշուառութեան, լուսահատութեան,
Փակուել է ինձի դէմ գուռն աղքատութեան,
Բացուելու գիւրութեամբ հնար էլ չկալ:

Կայ արգեօք Մաւելէն խրախուս տուող,
Ողջամիտ խօսքերով հասատ լոյս տուող,
Բացի սուրբ գրքերէն ինձի լոյս տուող,
Զկալ, էլ մէկ ուրիշ զամբար էլ չկալ:

Բ Ե Ա Գ Ո Ւ Ա Ա Ի Լ Ա

Օրը մէկ տրամութիւն, տարին հազար յաւ,
Քաշելով ինձանում ոլժ էլ չի մնաց.
Լացըս, աղաղակըս եղան ոչ սակաւ.
Քանզի իմանալու լոյս էլ չի մնաց:

Ստուերի պէս անցան օրերս բոլոր,
Ո՛, ես անմիթար, ո՛, ես սգաւոր,
Ամիսը, շաբաժը, մինչ օրը մէկ նոր,
Ականջիս չի հասած՝ գոյժ էլ չի մնաց:

Այս անբազութիւնը է իմ մեղացէս,
Յետ կացէք իմ ջուրէս, իմ կերած հացէս,
Մաշիս իրաւ կասեմ, բացի կենացէս,
Ինձ տալու աշխարհին՝ տոյժ էլ չի մնաց:

Թ ի ջ ն ի ॥

Իմ տուած յարգանքս պատուելի ընկեր,
Անկեզծ սիրելիի պատիւ համարէ,
Իմացիր, քո սէրդ որառմս է, ընկեր,
Այրիլս քո տեսոյդ, քեզի համար է:

Հագել, զարգարուել ես գեղեցիկ հալաւ,
Ամեն մարդ քեզ կասէ գեղեցիկ հաւ լաւ,
Հոգիս կրակովդ գեղեցիկ հալաւ,
Թէ խիզճ ունիս, մէկ մտածէ, հաւ մարէ:

Զեռնիս վերքերն արիր քարանցաւ,
Մարդ եմ ես, սիրելի, չեմ իսկ քար անցաւ,
Քո մասին զլիցոս քանի քար անցաւ,
Լեր ցաւակից, արի, թուէ, համարէ:

Գ ի ի թ ի ի 8

Առանց վախի առանց տհի,
Քաջերու տուն Սասունալ սար,
Քեզնից հրդեհ կը պատահի,
Կրակի բուն Սասունալ սար:

Եկաւ ողջ Արաբիստանը,
Որ նուաճէ Հայաստանը,
Քեզ չը յաղթեց Ճինկիզիսնը,
Կեցար կանգուն Սասունալ սար:

Հարաստանը նոր կանաչեց,
Թշնամին տեսաւ ամաչեց,
Եւրոպան քեզի ճանաչեց,
Առար անուն Սասունալ սար:

Քրտի Թուրքի դահիճներ էք,
Թունաւորող կարիճներ էք,
Սարերու մէջ կարիճներ էք,
Գու և Զելիթուն Սասունալ սար:

Վերացաւ խաւար գիշերը,
Փալեց երկնալին լապտերը,
Կապասեն Տաճկահակերը,
Քեզնից գարուն, Սասունալ սար:

Ն Ա Խ Ա Յ Ի Ւ

Սւետաբեր խօսնակը Հայուն, հարաւէն պիտի գալ,
Կսաղասեմ և յոյս ունիմ, գտրունք հարաւէն պիտի գալ.
Հիւսիսը պէտքէ հրամայէ, պահանջէ իսկապէս,
Իմ սիրուհին պճնուած սիրուն, հարաւէն պիտի գալ:

Արեւելքը ոչ մի ժամ արեւմտքից բան չ'սպասէ,
Քաղցրախօս կեանք պարզեռդ թռչուն հարաւէն պիտի գալ
Փրկիչը հարաւային կողմէն եկաւ մեզ փրկելու,
Ալնոլէս էլ մեծ առաքեալ Արթուն հարաւէն պիտի գալ:

Եատ վաղուցուայ ամուլը լզի է արգէն կարծում են,
Երբ լինի արու զաւակ, արբուն, հարաւէն պիտի գալ.
Երբ ըարտի մկրտութեան հասնի մանուկը, ով Զիւան,
Կնքողից բարձրապատիւ անուն հարաւէն պիտի գալ:

Փ Ա Խ Բ Է Խ Ո Ր (ՀՇ)

Ազգ իմ, որքան նկուն մնաս,
Սիրոս քեզանից չի զատուի,
Հազար տեսակ չարչարտնք տաս,
Սիրոս քեզանից չի զատուի:

Քեզ չեմ մոռանալ յաւիտեան,
Հարազատ մալը իմ Հայաստան.
Թէկուզ գրախոն էլ ինձի տան,
Սիրոս քեզանից չի զատուի:

Քեզանով եմ ես երջանիկ,
Իմ սիրելի, իմ անուշիկ,
Ծոցիդ մէջը հանգչիմ, մալրիկ,
Սիրոս քեզանից չի զատուի:


Զիւանին եմ քեզ բարեկամ,
Քանի ոզի եմ ամենալն ժամ,
Հնդկաստանին էլ տէր դառնամ,
Սիրոս քեզանից չի զատուի:

Խ Ա Խ Ա Յ Ի Ւ

Եկալ անցնելու քեզանից,
Արաքս, ինձ մի ճանապարհ տուր,
Հեռացել եմ տեղից տանից,
Արաքս, ինձ մի ճանապարհ տուր:

Այս աշխարհն է հին Հայաստան,
Նախնեաց մերոց էր որորան.
Ինձի երեք սպասողք կան,
Արաքս, ինձ մի ճանապարհ տուր:

Ոռոգում ես գու երկիրը,
Գետերու միջում ընտիրը.
Լաւ Ղարիմիս ինդիրը,
Արաքս, ինձ մի ճանապարհ տուր:



Գ Ա Զ Լ Լ

Նազելոյս տմալ է իջել արեւի պէս վառ երեսին,
Սգուորի պէս, սև շղարշ է ծածկել պալծառ երեսին,
Աչքերի և ունքերի սևութիւնը չճր բաւական,
Որ նորից մութ քօղ է առել կոյսը կայտառ երեսին:

Կաթնաբուխ բերանը փակ, աչքերը արդէն դալկացած,
Խաւարը գիշերի պէս պատել է պատկառ երեսին,
Մէկ աարի կայ, չեմ գիտեր, հիւանդ է, բնչ է տիրուհիս,
Կարել է—վերացել է ժպիտը իսպառ երեսին:

Մարտը գարուն գիտնալով գգոյշ չպահեց ինքն իրան,
Գոյնը որ թօթափել է՝ ցուրտն է պատճառ երեսին,
Տաղալեց լուսդ օդապարփկի նման Զիւանի,
Հարաւից լանկարծ փշեց ահռելի թաթառ երեսին:

Ա Ե Լ Ի Լ

Մի լինիր, ով բնութիւն, կեանքիս դաւաճան մի լինիր,
Մի լինիր, ինքնահաւան մարդուն սիրական մի լինիր,
Աշխատիր առաքինի նիւթեր ժողովէ անօթգ,
Ծնոտի, անօգտաւէտ բառի օթեւան մի լինիր:

Կրօնդ և քո լեզուդ միշտ պահպանէ կեանքիդ նման,
Խարերայ սուտ կղերի խօսքով պապական մի լինիր,
Միմիալն քո պատիւդ աւելնալու համար տգէտ,
Փառամոլ և շահասէր պատուի մուրացկան մի լինիր:

Ամենալն մարդու իրա վարուիր գաղափարով հետք,
Ճշմարիտ ընկերութեան կեանքիցը բաժան մի լինիր,
Արտաքին գէմքիդ նման, ներքին խորհուրդդ էլ սուրբ տրա,
Գարշելի ոսկորներով լեցուն գերեզման մի լինիր:

Աշխատիր ծուլութիւնը քեզանից հեռու պահէ միշտ,
Աղքատի անտանելի վիճակին արժան մի լինիր,
Ով Զիւան, անհիմն—անհաստատ սէրիցը հեռու փախիր,
Վառուելով Ալալիսի Արթուրի նման մի լինիր:

Ա Մ Պ Ա Հ Ի

Գու այն երկրէն մի հեռանար, Հայի ճուտ,
Ուր որ նախնիքներէդ լիշտառակներ կան,
Մրսած ժամանակդ կը քաղես օգուտ,
Դեռ մսխրի մէջ թաղուած հին կրակներ կան:

Բնակուած երկիրդ սուրբ է, Հայ եղբայր,
Հայի արնով ներկուած է ամեն քար,
Զոհուել են հաւատի և ազգի համար,
Պարկած հազարաւոր նահատակներ կան:

Զիւան, ազգիդ հաւատարիմ ծառալէ,
Տեղը եկաւ մինչեւ կեանքդ ընծայէ,
Հալրենիքիդ վերայ լաւ աչքով նայէ,
Իւր մէջը հոգերուղիս աւերակներ կան:

Պ Ա Խ Տ Ե Ւ

Ոնմիտ ճնճղուկը բազեի ճանկից,
Ուզում է որս խլել, խելքի աշեցեք,
Կարծես ձանձրացել է գլխից ու գանկից,
Պատերազմ է մտել, խելքի աշեցեք:

Խելքին զու տալով է հիմալ տմեն բան,
Յիմարն էլ իմաստուն կարծում է իրան,
Նիշար հաւը՝ պարարտ մեծ սագի նման,
Ուզում է ձու ածել, խելքի աշեցեք:

Ազնիւ մարդը անարգւում է գեշի հետ,
Երիվարը լուծ է քաշում էշի հետ,
Երկու տարուալ հորթը՝ յուլ գոմէշի հետ,
Բերել կամ են լծել, խելքի աշեցեք:

Դայը վերան ոչխարի մորթի առած,
Գառներուն պահապտն հսկող է դառած,
Աքլորը քարոզչի վերարկու հագած,
Ամբիոն է ելել, խելքի աշեցեք:

Ուզուր մետաքսագործ, եղը նաւավար,
Դայը հովիւ դառած՝ կարածէ ոչխար,
Ազուէսը հաւնոցի դրանն յուշարար,
Ի՞նչ հսկող են գտել, խելքի աշեցեք:

Փափուկ ճենտէլմէն է հաստ գռեհիկը,
Ամբոխի գիտունն է՝ խելքից բոպիկը,
Կենացը մէջ ծառ չանսած ուամիկը,
Այգեպան է եղել, խելքի աշեցեք:

Երեխան ձեռն առած փթած հին լորը,
Էռնել կամի գարձող ջաղացի քարը,
Գաճած մուկը շրջել կուզէ մեծ սարը,
Կողքը գէմ է տուել, խելքի աշեցեք:

Ուրացողը խիզճ չունի տմենեխին,
Զգգալով՝ սպիտակ տառում է սեխին,
Կոյրը չանսնելով լոյսը արևին,
Աշխատում է ստել, խելքի աշեցեք:

Աւել հոգսը մնաս կուտայ իւր անձին,
Ուրիշի յաւերը առնելով վզին,
Գայը լոշոտել է մարգացեց մէկին,
Խենթը սե է հագել, խելքի աշեցեք:

Գորտը մեծ պարոնն է տաքուկ ջրհորին,
Գուրս ելաւ՝ բաժինն է վիշապի փորին,
Իրար հետ սուտ կոռուել են ձին ու ջորին,
Եշը մէջ է ընկել, խելքի աշեցեք:

Ժլատն աշխատելու է շատ ընդունակ,
Իւր հացը ուտելու չունի ախորժակ,
Խեղճ անձը զրկելով դիզել է ստակ,
Ուրիշն է վալելել, խելքի աշեցեք:

Յանցաւոր հարուստը ուրախ խնդալով,
Մեղքից ազատուել է մեծ գումար տալով,
Խեղճ մարդը սիսալմամը մի հաւ գողնալով,
Բանդի մէջն է փթել, խելքի աշեցեք:

Մարդ կայ գերդաստանը պահում է ցամտք,
Կերթայ գուրսը կուտէ մեղը ու սեր կարագ,
Ալոց համար կանէ ձախնով պատարագ,
Իրան ժամ չի անիլ, խելքի աշեցեք:

Մի նոր քաղաք տեսալ ժամի սիրահար,
Բնակիչները Հայ՝ մօտ քսան հազար,
Իրանք սնունդ չունին ապրելու համար,
Հինգ հատ վանք են շինել, խելքի աշեցեք:

Ինչ կենդանի ուզէ լինիլ շանսատակ,
Կերթալ ու կ'մտնի ծանր բեռի տակ,
Նապատակը առիւծի գէմ համարձակ,
Կոյւ է սկսել, խելքի աշեցեք:

Յորենը մի անգամ լինելով տկար,
Ալնպէսրու չեն գտել, որ անեն նշխար,
Կորեկ հացը իրան կարծելով յարմար,
Ոեղան է բարձրացել, խելքի աշեցեք:

Մեծամեծ մարդիկը հեռու են կանգնած,
Առպարեզը համբակներուն են թողած,
Զիւանն էլ կազ իշով կարտան մտած,
Բանաստեղծ է դարձել, խելքի աշեցեք:

ՔԵՐԵՎԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԴՅՈՒՆԱՎԱՐ

Գնաց վրէժ առաւ Հռչէ արքայից,
Հայոց արքալ քաջ Տրդատը ուրտեղ է.
Քսան երկու կանգուն գետի վերայից,
Մէկէն թռչող Վարազդատը ուրտեղ է:

Գալ Վահանը Պարսից զօրքին կրակեց,
Հնարներ բանցրուց ու խալտառակեց,
Տաք շամբուրով Մեհրուժանին պսակեց,
Բագրատունի քաջ Սմբատը ուրտեղ է:

Նա ալլոց զօրքերից առնում էր գրաւ,
Ալլոց զրաւում էր, ինքն էր անզրաւ,
Քանի անգամ Հռովմալեցւոց գէմ գրաւ,
Ոյն Տիգրանեան Միհրդատը ուրտեղ է:

ՎԵՐԵՎԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԴՅՈՒՆԱՎԱՐ

Վերջացաւ մեր ալգին վերջ եղաւ ու վերջ,
Անտէրութեան ձեռքից աւերակ մնաց,
Երբ տունկերն սկսան մնալու ստերջ,
Միանգամայն անջուր, անվտակ մնաց:

Հինգ հարիւր տարուալ չափ չ'գալով անձրև,
Շառերը չորացան, ծծելով արև,
Ինքը բոլորսին բնաջինջ եղև,
Միալն լակ անունը յիշատակ մնաց:

Զիւան, խնդրէ նա քաշէ պատուհանը,
Ով որ հասուց ալս մեր ալգուն վնասը,
Աստ և անդ ցրուելով ամեն մի մասը,
Մնացածն էլ ալլոց ձեռի տակ մնաց:

ԵՐԵՎԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԴՅՈՒՆԱՎԱՐ

Գեա գիշեր է, տռաւօտ չէ, հանգիստ քնիր, իմ զաւակ,
Ահա ծիծու առ բերանդ, եթէ ունիս գուն փափագ,
Թէւ գրսից քո տկանջին դիպչում է սուր աղաղակ,

Քնիր, քնիր, սիրուն մանկիկ, ժամանակ չէ զարթելու,
Մի հաւատար, որ խաբում են, ոչինչ չունին քեզ տալու:

Դու քոյրերիդ մի մտիկ տար, նրանք մեծ են, գառնուկս,
Օրօր ասեմ, գեռ դու քնիր, որ մեծանաս, մանուկս,
Ահա դըի գլխիդ տակը բարձի տեղակ, բազուկս.

Հանդիստ քնիր, սիրուն մանկիկ, ժամանակ չէ զարթելու,
Մի հաւատար, որ խաբում են, ոչինչ չունին քեզ տալու:

Դրացու չար երեխայքը քեզ դոչում են — գուրս արի,
Բայց չեմ թողալ, որ գու գնաս՝ հանդիպես պատահարի,
Ոչ ոտք ունիս և ոչ լեզու, պարկի, տեղդ — դադարի.

Անհոգ քնիր, սիրուն մանկիկ, ժամանակ չէ զարթելու,
Մի հաւատար, որ խաբում են, ոչինչ չունին քեզ տալու:

Օրօցքիդ մէջ քեզ պինդ կապեմ, չը լինի թէ զլորիս,
Կամ թէ ընկնիս գետնի վրա, քեզ վնասես, մոլորիս,
Մտիր Մորփէոսի գիրկը, մինչեւ լեզու սովորիս.

Այժմ շուտ է, սիրուն մանկիկ, ժամանակ չէ զարթելու,
Մի հաւատար, որ խաբում են, ոչինչ չունին քեզ տալու:

Բայի կաթը գու չես կարող ջոկ բան ուտել, քաջ տղայ,
Բերանումդ ատամ չկայ, երեխան ես, երեխան,
Ինքս կասեմ քեզի զարթիր, երբ բարսի տաենը դալ.

Դեռ հիմայ լոյսը չէ բացուել, ժամանակ չէ զարթելու,
Մի հաւատար, որ խաբում են, ոչինչ չունին քեզ տալու:

Օրօցքիցդ ձի կը նստիս, երբ մեծանաս, պատօւական,
Սիրուն մէջքիդ թուր կը կապեմ, ուսիդ կառնես հրացան,
Մեծ եղբայրս, ազնիւ քեռիդ՝ երբ որ կուտայ հրաման.

Ինքս կասեմ, վեր կաց, մանուկ, ժամանակ է զարթելու,
Կարելի է մի բան յուսալ ուրիշներից քեզ տալու:

Ա Պ Պ Զ Ո Ւ Ա Ն Ի

Օտարի բնական գիտութիւնիցը,
Իմ հալ պասի տուած խրատը լաւ է.
Փարփզու զարդարուած քառանկիւնիցը,
Ինձ համար Անուոյ մէկ պատը լաւ է:

Ուրիշ տալիք չունիմ՝ թարց կեանքիս մահէն,
Ինձ ինչ կուտան օտարք իրանց մեծ շահէն,
Ինձ համար Փարփզու վեհ կայսեր գահէն,
Աշոտի քանդուած պալատը լաւ է:

Ի՞նչ հասկանամ անհոտ բուրաստանիցը,
Ո՞վ է գոհ անաշխատ ալգեպանիցը,
Անօգուտ, անողորմ, վաս իշխանիցը,
Ոզգասէր, աղորմած աղքատը լաւ է:

Յ Ա Ր Դ Ա Ր Թ Ւ

Ով որ իր ազգն ուրանալ,
Երկու աշքով կուրանալ,
Յետնեալ աղքատի նման,
Գոնէ ի գուռ մուրանալ:

Կշտին գիպչի գեղարդը,
Սրտիցը թափի լեարդը,
Դժոխքի բռնցկելիք,
Լինի ազգուրաց մարդը:

Կեղծ ու պատիր հնչողէն,
Կատուի պէս մռնչողին,

Աստուած աշխարհից ջնջէ,
Հայ անունը ջնջողին:

Հ Ա Յ Ա Ր Ա Ր Ա Ր

Թորկեր եմ խեզմ, տկլոր զիմ ճժեր զիմ տուն,
Կոլորտիմ մէկ փշուր չոր խացի խամար,
Ըսկի չունիմ դագար, ըսկի չունիմ քուն,
Եօթ տարի է լինէ չունին մէկ խապար:

Զըմ գինալ թէ, մըկալ ինչ ձուն տառ խալիս,
Կուրցեր են իմ աչեր, մացեր եմ լալիս,
Մէ գուռմ լէ չի բացուի իմ սև եղբալիս,
Զէմլէ էն կիշն իմ անօթի, անձար:

Խայու խաւատ, Խայու Աստուած, Փրկէ զիս,
Գիպա Մշու գաշտը իմ տուն խրկէ զիս,
Եա չէ առ իմ խողին, ումբը զրկէ զիս,
Ճամբախըս չիրիշկէ իմ սէֆիլ նուպար:

Պ Ի Ւ Խ Ո Մ Մ Ո Ջ

Զախորդ օրերը ձմռալ նման կուգան ու կերթան,
Վհատելու չէ վերջ կունենան, կուգան ու կերթան,
Գառն ցաւերը մարդու վերալ չեն մնալ երկար,
Որպէս յաճախորդ շարուէ շարան, կուգան ու կերթան:

Փորձանք, հալածանք և նեղութիւն ազգերի գլխից,
Ինչպէս ճանապարհի կարաւան կուգան ու կերթան.
Աշխարհը բուրաստան է յատուկ, մարդիկը ծաղիկ,
Որքան մանիշակ վարդ պալասան կուգան ու կերթան:

Ոչ ուժեղը թող պարծենալ, ոչ տկարը տիրի,
Փոփոխակի անցքեր զանազան կուգան ու կերթան,
Սրեր առանց վախենալու ցայտում է լոյսը,
Ամպերը դէպի աղօթարան կուգան ու կերթան:

Երկիրը ուօեալ զաւակին է փայփայում մօր պէս,
Անկիրթ ցեղերը թափառական կուգան ու կերթան,
Աշխարհը հիւրանոց է, Զիւռն, ազգերը հիւր են,
Ալսպէս է կանոնը բնական, կուգան ու կերթան:

Գ Ո Ջ Լ

Խնդրում եմ, աղերսում եմ, Տէր իմ, քեզանից օգնութիւն,
Ողբալով մորմոքում եմ, Տէր իմ, քեզանից օգնութիւն,
Երկիւզգ, սուրբ անունդ սրախ վրալ գրուած կալ միշտ,
Բազկատարած խնդրում եմ, Տէր իմ, քեզանից օգնութիւն:

Քո Ղարիբն եմ խղճալի, ցոլց տուր, Տէր իմ, մէկ ճանապարհ,
Հաւատասում եմ, որ քո մօտք չը կալ մէկ բան անհնար.
Այս ամալի—անապատ աեղերում ինձի ման միտ տար,
Ես չափազանց տրտում եմ, Տէր իմ, քեզանից օգնութիւն:

Պ Ե Լ Բ Յ Զ ի

Սլո իմ ծով արտասուք գնան ընթանան,
Ի քեզ սիրտ ապառաժ քանի կան մնան,
Խմ Սնի վաղեմնի լինէն հեռացեալ,
Ասա դու ինձ, արդեօք, ուր եղեն պաշտպան։
Ա՛խ, ուր եղեն պաշտպան։

Երկին արդեօք անէծ, թէ լերինք Հալոց,
Զիս ալսպէս շուարեալ թողին լանմար բոց։
Գոռ բաղդին շրջանակ գնաց մեկնեցաւ,
Ցիս յաւել բիւրաւոր կսկիծ վիշտ և ցաւ։
Աւազ զմեծ ցաւ։

Ե՞ր ալդքան անխնամ լինէն հեռանաս,
Զիս թողեալ յերերուն հեռի կաս մնաս,
Կոյլ բաղդին կերպարանք թէն սեացաւ,
Բայց քո ալդ խղճմանք զիմրդ քարացաւ։
Ալդքան մոռացաւ։

Մի ալ յաւելուր, խեզճ Բագրատունէան,
Արիւնոտ սրտի ցաւ, որպէս ովկիան։
Երերեալ, տատանեալ մնամ ի շուար,
Ոչ տունուս լԱստուծու քոց զործոց արտր։
Արտի իմոլ ճար։

Դ Ե Ա Ն Զ Ա Լ ի

Հանդիպողը քեզի տիրի կը մնայ,
Տեսնելով վիճակի թշուառ քո, Սնի,
Սնիրաւը երբէք էլ մօտդ չի գալ,
Բաղդդ ուրացել է իսպառ քո, Սնի։

Պալատներդ հողին եղած հաւասար՝
Կրկին նորոգուելու չունիս յոլս ու ճար,
Վանքերդ կիսաքանդ, առանց ժամարար,
Ուր է դրուժիւնդ պայծառ քո, Սնի։

Ո՞ւր է Սշոտ Երկաթ, ո՞ւր Վահրամ իշխան,
Ո՞ւր է Սմբատ Մեծ-Նահնշահ ախոյեան,
Վեստ Սարգիսի ձեռքով կերտւ Յունաստան,
Ո՞ւր է սէզ Դագիկդ կայտառ քո, Սնի։

Չունիս շէն մնացած մի տուն, մի փողոց,
Դարձել ես ըսւերու ձագուց օրօրոց։
Ալդիներդ ողջ եղել են վշանոց,
Գոնէ չի երեւում մէկ ծառ քո, Սնի։

Կիսամեռ ես, չ'կան ձեռքերդ ուժեղ,
Արդէն քարակոյտ ես, էլ չես փառահեղ,
Գոնվում են ամեն երկիր, ամեն տեղ—
Ժողովուրդդ պանդուխտ, չուառ քո, Սնի։

Անասնոց հօտերը զօրքերիդ տեղակ,
Կողքըտում են քեզի ազատ—Համարձակ։

Որ աւուր գտունում ես կրկին աւերակ,
Անտարբեր որդիքդ են պառճառ քո, Անի:

Նենգեր չ'լինէին, ով գու նախաթուռ,
Կապրէիր պապէ պապ, մինչև թոռէ թոռ,
Վանքերիդ քարերից շինում են ախոռ
Գիւղացիքդ տգէտ, ցանցառ քո, Անի:

Ել ոչ աւան ունիս, ոչ էլ ագարակ,
Չունիս ազօտ լուսով գոնէ մէկ ճրագ,
Ալրի աղքատ կնոջ նման խեղճ քաղաք,
Հանդերձներդ պատառ-պատառ քո, Անի:

Նման ես ջախջախուած ծովասոլզ նաւի,
Տեսնողը չի օգնիլ, միայն կըցաւի.
Դրութիւնդ նոյնն է, չի փոխուիլ լաւի,
Գարուն, ձմեռ, ամեն ամառ քո, Անի:

Քո մէջդ այնպիսի մարդիկ գտնուան,
Որ քեզի մատնեցին Յուդայի նման,
Պատճառը չար հոգի իշխաններդ եղան,
Որ չ'մնաց ճրագդ վառ քո, Անի:

Ուրացան Արարչին, հետեան չարին,
Անունդ, պատիւդ խփեցին քարին,
Թաղաւորդ վաճառեցին օտարին,
Քահանակդ կերան կաշառ քո, Անի:

Չկալ զանգակի ձալն, չ'կալ զօղանջիւն,
Լութիւն է տիրել ամեն մի անկիւն,
Տաճարներուդ միջից սաղմոսերգութիւն
Էլ չի լովում քաղցրաբարբառ քո, Անի:

Նրան ել է գիպել մահառիթ նետը,
Որ ալգպէս տխուր է, չի խօսվում հետը,
Արփւն արտասունքով Ախուրեան գետը,
Մօտէդ կանցնի միշտ անսպառ քո, Անի:

Միջիդ շահասէր մարդիկը սխակալ,
Քուկիններիդ կ'հանէին միշտ սխալ,
Գետը գարձուց քեզ չկարաց օգուտ տալ,
Կաթուղիկոսդ վեհափառ քո, Անի:

Մի լալ, մալր ողբալի, քաղաք գու, մի լալ,
Տաճարներուդ պաշտպան մեծ Հայրապետ կայ,
Արարատդ բնտպաւառ քեզ վերալ
Միթէ չի մտածիլ երբէք, խեղճ Անի:

Զիւանի, սրտագէտ իշակը արդար,
Բարուն բարի կուտայ չարին ել միշտ չար.
Քեզ կործանող ազգն ել չտպրեցուց երկար,
Արարիչդ սուրբ, անաչառ քո, Անի:

Ո Ս Ի Վ Ա Ր Ա Կ

Ի՞նչ եղար, մէկ դուրս արի, Հայոց արեգակ, ի՞նչ եղար,
Թողնելով որդիքներդ խաւար մութի տակ, ի՞նչ եղար.
Հինգ գար ու վեց տարի է հեռանալդ ճիշտ մեզանից,
Ալրում ենք առանց լուսով ալսքան ժամանակ, ի՞նչ եղար:

Մասնաւոր շառաւիղդ մօտ տարիներս ցոյց տուիր,
Ազգի մէջ բարձրացուցիր աղմուկ—աղապակ, ի՞նչ եղար,
Քո գիւղազուն, անարատ, քաջ Հայերդ ալսքան տարի
Մահմետի որդիքներին թողիր հպատակ, ի՞նչ եղար:

Սառեցաւ մեր արիւնը ցուրտ հողմալին պաղուժիւնից,
Ե՛կ, հասիր, լոյս ջերմարար, կենդանի կրակ, թնչ եղար,
Բալքանեան լեռներիցը նոր գուրս գալող արևի պէս,
Մէկ գուն էլ, Հայոց արեւ, ցոյց տնւր նշանակ, թնչ եղար:

Ափսոս ենք, խղճած մէկ ազնիւ լուսարար թագուհի,
Ընծալէ Հայաստանին արժանի պատկ, թնչ եղար.
Կեանք կուտան ողջ Հայերը, Զիւանին էլ քեզի համար,
Դուրս արի պալծառ լուսով, ազատ — համարձակ, թնչ եղար:

Յ Ի Ւ Գ Ե Ց Լ Ի

